



անգ ան
բր բր
մ մ

Երկու ամիսներ առաջ ցաւով կը լսէինք բերքերէն մահը Ս. Աթոռոյս մէջ մեծ բարեբար Գալուստ Կիւլպէնկեանի եղբօր՝ Գառնիկ Կիւլպէնկեանի, որ տեղի ունեցած իր փառիկի մէջ:

Իսկ 2 Յուլիս 1952 ին, Գեր. Տեղապահ Սրբազան Հօր ղրկուած հեռագիր պիտի մը կը գուժէր մահը Վսեմ. Գալուստ Կիւլպէնկեանի Տիկնոջ՝ Տիկ. Նուարգ Կիւլպէնկեանի:

Այս կրկնապէս ժամուր առիթներով, 4 Յուլիս 1952 ին, Ս. Յակոբեանց շանց Մայր Տանարին մէջ կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր Ս. Պատարագ: աղ: Իսկ Կիր. 6 Յուլիսին Միաբանութեան սեղանասան մէջ տեղի ունեցաւ հոգեհանգ: ս:

Ողբացեալ Տիկնոջ մահէն շաբաթ մը առաջ, հեռագիր մը եկած էր խնդրեալ իրեն ինչ որ Տէր եւ Տիկ. Կիւլպէնկեաններու ամուսնութեան 50րդ տարւոյ յոբելանք անց տօնով: Սակայն բազմին մէկ խաղովը, հանգուցեալին մահը տեղի կ'ունենար:

Տիկ. Նուարգ դուստրն էր Էստեան վրժ.ի հիմնադիր եւ ազգային բարեբար շարժ. Էստեանի: Իր նախակրթութիւնը ստացած էր ծննդավայրին մէջ, փորձառու ու ուսուցիչներու խնամքին ներքին: Շնորհիւ իր սուր իմացականութեան եւ ազնիւ զննականութեան, յարգանք կը ներշնչէր ամենուրեք եւ ամենուն:

Ս. Յակոբեանց Միաբանութեան անդամներէն շատեր կը յիշեն հանգուցեալին Տիկնոջ այցելութիւնը Ս. Աթոռ, եւ բարեպաշտիկ եւ ջերմ վերաբերմունքը ազգապարծան այս Հաստատութեան նկատմամբ: Իր մահուան ժամուր առիթով մխիթա շաբաթան յուս մըն է այս, մեզ բոլորս սփոփող:

Սիմոն, յանուն Գեր. Տեղապահ Սրբազան Հօր եւ բովանդակ Ս. Յակոբեանց շանց Միաբանութեան, իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ Կիւլպէնկեան Գերդասանի սգաւոր պարագաներուն, խնդրելով Տիրոջ օրհնութիւնը եւ պահպանութիւնը Կիւլպէնկեան Տան բոլոր ի կենդանութեան եղող անդամներուն վրայ:

Տէրը բոլ լուսաւորէ հանգուցեալներու հոգին:

